ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի հունիսի 30-ի N 1- Լ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 14-րդ ենթակետով, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգի» 25-րդ կետով, համալսարանի գիտական խորհրդի 2018թ. սեպտեմբերի 26-ի թիվ 1 նիստով հաստատված «ՀՊՄՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի» 36-րդ կետով և լսելով Համալսարանի 2022-2023 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին (զեկ՝. Պրոռեկտոր Նաիրա Սաֆարյան)՝

Գիտական խորհուրդը որոշում է.

Հանձնարարել համալսարանի ֆակուլտետների դեկաններին և ամբիոնների վարիչներին

1. Ֆակուլտետների խորհուրդներում և ամբիոնների նիստերում քննարկել հանձնաժողովների նախագահների կողմից արված առաջարկություններն ու դիտողությունները:
2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները հաստատելիս հաշվի առնել դրանց արդիականությունը, մեթոդական ուղղվածությունը և բացառել տարեցտարի կրկնվող թեմաները:
3. Մինչև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը ամբիոնների նիստերում քննարկման առարկա դարձնել թեզերի ղեկավարների հաղորդումները՝ շրջանավարտների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ: Պաշտպանության երաշխավորել միայն համապատասխան մակարդակ ունեցող աշխատանքները:
4. Ներկայացնել առաջարկություններ համալսարանի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգում լրացումներ կատարելու վերաբերյալ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ